

մութիւնը, որը չունի այնքան պաշապաններ, որքան նամակը, որոյ խակ պատճառով այդ պատկերը, ասում են, նկարուած էր:

(Ի յէր-է-յ-)

Թարգ. Վ. Վ. Բ.

« Դուեալ է իմ վասն քո եւ վասն բժշկութեանդ, որ լինին ի մեռս քո առանց զեղոց եւ արմատոցդի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել եւ կաղաց դնալ եւ զորոտս սրբել²⁾ եւ զայսս պիղծս³⁾ հանես, եւ որ միանգամ չարչարեալ են երկար⁴⁾ հիւանդութեամբք՝ բժշկես. դու եւ զմեռեալս յարուցանես: Եւ իրբեւ լուայ վասն քո զայս ամենայն, եղի ի մոռի իմում մի յերկոց աստի, կամ Թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից⁵⁾ զործես զայգ կամ Թէ որդի իցես դու Աստուծոյ, եւ զայգ առնես: Արդ վասն այնորիկ⁶⁾ զրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս եւ եկեացես առ իս եւ բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Նաեւ լուայ զի Հիւայք տրանջեն զքէն եւ կամին չարչարել զքեզ. բայց քաղար մի փորրիկ եւ զեղեցիկ է իմ, եւ քաւական է մեզ երկոցունցս »:

Պատասխանի թղթոյն Արքայբու, զոր զրեաց Թումաս առաքեալն հրամանաւ Փրկչին:

« Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իրբեւ⁷⁾ ոչ իցէ տեսալ զիս. զի զրեալ է վասն իմ այսպէս. « Զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատացեն յիս, եւ որք ոչն տեսանեն՝ նորս հաւատացեն եւ կեցցեն »: Իսկ վասն այնր զի զրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեայ ես: Եւ իրբեւ կատարեցից զայս, ասլա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. եւ յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, եւ կեանս քեզ եւ որոց ընդ լեզ են շնորհեսցէ »⁸⁾ »:

(1) Մի քանի օրինակ, երեւեցաւ:
(2) Չափ, զատ. սրբես:
(3) Չափ, զատ. եւ զայսս պիղծս եւ զգէշս: (Տես եւ Միքիթարեան տղաքրոյ թիւն):
(4) Նոյն, քեզ երկար:
(5) Նոյն, եւ:
(6) Նոյն, այնորիկ:
(7) Նոյն, իբր:
(8) Միքիթ. տղաքրոյ թիւն, էր. 403 եւ 406:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԵՆԵՊԵՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՍՏԵՆՈՒՄԸ.

Գ. Ը. ՅԵՀԱՏԱԿԵՐԵՆԻՑ ՀԵՆԱԾ.

1842 ԹԻՒ 12 ՕԳՈՍՏՈՍԻ.

ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ:

(Ծ-Ե-Ն-Ի-Դ-Ե-Դ)

Մինչ հասայ քարանցաւի դուռը, նախաճաշիկն առի ծառայիս ձեռքէն ներս մրտայ, օրհնեալ հայր ասեցի միայնակեցին ու նստայ: Նա սաղմոսն ձեռքին՝ զլուսն կոր կարդում էր, երբ ինձ տեսաւ՝ զլուսն բարձրացրեց ու ասեց, բարւով եկիր, ու սաղմոսի կարդացած տեղը մոմով նշան դրաւ՝ խփեց, ձեռքէն վար դրաւ: Իս օր միայնակեցի ղէմքն ուրախ էր եւ ծիծաղաշարժ, որպէս թէ ճաշակ ունէր խօսելոյ, վասն որոյ եւ կրկնեց, բարւով եկիր, բարւով եկիր. հետաքրքրութիւնդ զիս եւս չէ՞ յազած, ի՞նչ է, ուղում եմ շուտով սկսեմ թէ փոքր սպասեմ, մտիւ է երեկեան պատմութիւնս ուր մնալն: — Հայր սուրբ, պատասխանեցի, դու ինքդ ես վկայում, ուրեմն եւ աւելորդ է ինձ առաջարկելն կամ խնդրելն՝ որպէս զի շարունակես:

Հա . . . շարունակեց միայնակեացն . . . հա Յովսէփն եւ Վաւիթն փոքր ինչ կանգնեցին մօտս, ասեցի նոցա՝ սաղմոսը մնա մօտս՝ դուք զնացէք քնեցէք: Նրանք զլուսն տուին զուրս զնացին: Արբ եւ մինակ մնացի, մին կանօն սաղմոս քաղկուց յետը՝ պառկեցի քնանալ: Տասն օր կար էնպէս անուշ եւ հանգաւ չէի քնել:

Շատ ժամանակ էր զիշերները վատ վատ երազներ կտեսնէի, բայց էն զիշերն ո՛չ ինչ չտեսայ: Այնուհետեւ շատ զիշերներ Յովսէփի, Ղաւիթի և Մովսէս ծառայքս էին ինձ մխիթարիչք, մանաւանդ լուս կիւրակի զիշերներն: Հէնց միւս մահմետական ծառայքս և սպասաւորներս կ'ընէին, սըրանք կ'ոգովուէին իմ փոքրիկ վրանումը, որ կից էր մեծ վրանիս, և միատեղ կիսատ պռատ կսկսէինք ժամերգութիւնը և ստէպ ստէպ ծուներ կ'ընէինք, որպէս թէ փոքրը բարեպաշտից ժողով էինք բաղկացնում: Աւա էր որ Ղաւիթը քահանայի որդի լինելով, պատիկուց տիրացութիւն էր արած, լաւ տեղեակ էր ժամերգութեան: Իսկ Մովսէսն կարդալ չգիտէր, և Յովսէփը գրելումն լաւ էր՝ բայց ժամակարգութեանը անտեղեակ: Հէնց կվերջացնէինք ժամերգութիւններն, նոքա կերթային, և անկողինս մտնելիս՝ էլի մին երկու զլուխ սաղմոս կ'ըսէի, յետոյ կ'ընջէի: Այնուհետեւ ո՛չ թէ խղճմտանքս սկսեց օր ըստ օրէ հանդարտվիլ և հոգին զօրանալ, այլ և բռնաւորի երկիւղն և ահն ոչնչացաւ սրտէս, որպէս թէ գերմարդկային ոմն էի եղած:

Որդեակ, ասեց միայնակեացն, որդեակ այսուհետեւ որքան որ պատմեմ տեսածներէս և զլիս եկածներէն ինձ քաջ յայտնի է, ինչպէս քո սիրտը վշտացնելոց և մորմոքեցնելոց են, էնպէս էլ ինձ յիշատակ Աստուածային արդարութեան պատժելոյ և խրտտելոյ այն կեանքումը:

Միայնակեացն ասեց ու քանի մի բովպէ լուկից յետոյ վեր առաւ, մտիս չէ քանի օրումը հասանք Արդավիլ և էն տեղաց Արաղի ափն: Էս տեղ տասն օր կացանք,

մինչև բանակն կարողացաւ Արաղն անց կենալ: Մտանք Վարարաղի և Աուխույ հողն՝ ինչպէս մօրելս: Ի՞նչ կարող էր դէմ դնել անհամար խուժողութ և բարբարոս զօրականաց առաջին: Ո՞ր զօրականի կերածն չէր արիւնախառն: Ի՞նչ արդեօք, քաղաք, զիւղ էինք մանում, կամ մօտոգն անց կենում ու չէինք աւերում, բնակիչքն թէ մահմետականք լինէին թէ քրիստոնեայք, մեզ համար մի և նոյն էր, նոցա կայքն ամեն զօրական, որոնց վերջին էր անգամ, իւրն էր համարում: Ամենայն օր թէպէտ տիրապետողներից և երևելի կալուածատիրոջներից ընծաներ էին գալիս Շահին, այսու ամենայնիւ ո՛չ ինչ չէին օգնում նոցա հողի վերայ բնակչաց աւերմանը: Քանի հազարաւոր զերի քրիստոնեայք . . . քրիստոնեայք եմ ասում, մի՞թէ բաց ի նայոց ազգէն, ուրիշ մին քրիստոնեայ ազգ կար էն տեղրանք: Քաւ լիցի: Ողորմելի նայերն անտէր անտերունչ . . . հա՛, նայք էին մեր զերիքն: Շատ անգամ երեսուն տարեկանէ ի վեր, ուր որ պատահում էին, եթէ չէին խոնարհվում և յանձնվում, սրոյ ճարակ էին լինում. իսկ փոքրերն, մատղաշներն, երեխայքն, ազջկունքն, նորապսակ զոդարիկ հարսներն զերի վարուած ուղտերի և ջորւոյ վրայ բռնաբարձ քարշ էին գալիս բանակի քամակէն: Թէպէտ երբեմն երբեմն ազատել տալիս էի նոցանէ իմ ծառայից անուամբն որպէս հաւատակիցք, ոմանցը սրան նրան խնդրելով, ոմանցը բարեկամաց միջնորդութեամբը, ոմանցը փողով, — բայց քանի՞ հողի — համարեա հարիւրին մինն էլ չէր լինել: Թագաւորները զանձերն չէին բաւականանալ էնքան զե-

րիքն ազատելոյ համար: Եւս կողմիցը ազատում էինք, ճանապարհ ձգում, հեռացնում բանակէն, միւս կողմէն կրկին բռնում էին շատ ողորմելիացը բերում: Բանակն էնպէս սփռուած էր, որ մին ծայրէն մինչև միւս ծայրն երկու օրվան ճանապարհ, երբեմն երեք օրվան ևս կլինէր: Եզատուածներին չէի կարողանում երկու օր պահել, որովհետև թէ մեզ համար ուտելիք զրոյացում էինք գտնում, նրանցը ինչ անէինք: Ի վերջոյ և ես անձարացայ, զբամի պակասութենէն չկարողանալով ինձ ու իմայնոցն պահել, հրաման տուի ինձ յանձնուած Ետրպատականցւոցն, որք մինչև էն ժամանակն եթէ աւար էին անում՝ ծածուկ էր, այնուհետև ոչ թէ Պարսից նման գերի, այլ ուտելիք, կայք և չորքոտանիք աւար անեն: Չկարծես թէ էն ողորմելիաց ողբն ու աղաղակն չէր հասնում Շահի ականջն: Երբէք փոյթ չէր նրան էնքան ողորմելիաց արտասուքն, արդարութիւնը և իրաւունքն չէր զրած նրա գրեումն: Ղարաբաղու և Նուխույ հողի սահմանումն էինք, մինչ Երևանու տիրապետողէ եկած դեսպանի հետը՝ եկած էր և մին եպիսկոպոս Աթուղիկոսից ուղարկած ընծաների հետը և ինձ վերայ ևս գիր ունէր Աթուղիկոսէն: Ինքս նոցա ահով դողով ներկայացրի Շահին՝ հրովարտակ առի, յանձնեցի նոցա և շուտով վերադարձրի:

Շահն տիրապետողների ընծայաբեր դեսպաններին յայտնում էր թէ՛ եթէ ինքեանք տիրապետողներն չներկայանան՝ զորուած են տիրապետութիւնից: Պարտաւորուեցան ամենայն դեսպանները շուտով յայտնել իւրեանց մեծերին: Աւելորդ կամ եօթներորդ օրը, մինչ զիս Ղարա-

բաղու հողումն էինք, տիրապետողաց զաւրստեան սկիզբն յայտնուեցաւ, և հետզհետէ զալիս էին, բայց ինչպէս ասած եմ, դարձեալ միմիայն Ղարաբաղու Եբրահիմ խանը և Ղրաստանու Ղալին համարձակուեցան նշկահել Շահի հրամանին: Եւս ջինքը յուսարով Շուշիի անառիկ ամրոցի պնդութեանը և իւր ժողովրդոց քաջութեանը, հիւանդութիւն պատճառ բերելով՝ ընծայ էր ուղարկած և հպատակութեան գիր, իսկ երկրորդն միամիտ գոյով Պովկասու լեռանց բարձրութեանը, անտառախիտ տեղերի կիրճերին, և ձմեռը՝ որ շատ հեռու չէր էն օրերէն, ոչ ընծայ և ոչ հպատակութեան գիր էր առաքած: Պեանջու տիրապետող Զաւատ խանը, որ միշտ ոտի տակ էր ֆնացած Ղրաստանի և Ղարաբաղի երկու սրտակից բարեկամ տիրապետողներէն, և երեւելի հայկազն Մելիք Մեջլումն, որ Ղարաբաղու տիրապետողէն խռոված՝ քանի մի տարի էր Պեանջայ կրնատէր իւր ժողովրդով, ամենից յառաջ սրանք էին եկած Շահի դուռը: Նոցա չգալոյ վրայ ժամանակ դտան և ևս զրգռել Շահին և ապացուցանել թէ նոքա երկրքեանը ևս, այս ինքն Ղարաբաղու և Ղրաստանի տիրապետողները ծածկաբար վաղուց է զաշնակից են չճանաչել քո Շահութիւնը: Եւս եղելութիւնը աւելի ևս էն ժամանակն տեղի ունեցաւ Շահի սիրտն զրգռել՝ մինչ քանի մի օր Ղարաբաղի և Պեանջայու հողումն զօրքն ցրուած և ինքն Շուշույ մօտ նստած, քննեց տեսաւ անմատչելի է դղեակն և շատ ժամանակ պէտք է կորցնէ և թերևս չի էլ կարող առնել, վասն որոյ և անցաւ զնաց դէպ ի Պեան-

ջայ, ուստի և գնալոց էր Վրաստանի վերայ և էն տեղաց վերադառնալիս Վարաբաղու խանին էլ պատժէ ու վրէժխնդիր լինի: Վրաստանի հարստութեան և մանաւանդ բնակչաց գեղեցկութեան համբաւըն շուտով շատացրին Ֆաւադ խանի և Մելիք Մէջլումի խորհրդին կողմնակիցները:

Գեանջայ էինք՝ երբ բանակի կողմիցն երեւելի զօրավարներն խնդրամատոյց եղան Շահին թէ, արդէն մեր գերիքն մեզ ծանրըր բեռներ են, ի հարկէ Աստուծով Վրացոտունը աւերելիս ևս գերեւոց ենք, էն ժամանակն անկարելի է մեզ էնքանին հացով կշտացնել, մինչ շատ անգամ պատահում է հիմի մեզ էլ է պակասում ուտելիքը, ուրեմն հրաման տուր էս պատրաստ գերիքն ուղարկենք Արագի էն կողմին, ուր որ կնշանակէք, մնան էստեղ՝ մինչև մեր վերադառնալն: Էս շատ լաւ միջոց էր և շահին, որպէս զի նախ բանակն թեթեւ լինելով՝ շուտով կշարժէր, երկրորդ աւարի յուսով զօրականներն կը քաջանային: Ֆաւադ խանը լաւ տեղեակ ըլնելով Վարաբաղցւոց քաջութեանը, խորհուրդ չտուաւ նրանց հողովն ծանրութիւնը ծանապարհ ձգել, ասելով՝ չլինի թէ ինքն Արբասիմ խանը դուրս գայ բերթէն ու խլէ. վասն որոյ լաւ է պարտաւորել Աուխուոյ և Շամախուոյ խաններին, որ ինքեանք իրանց հողովը ու զօրքովը տան անցկացնեն Արագն ու հասցնեն Արգավիլ, և թէ էս եղանակաւ՝ Շահի բանակիցն էլ զօրական չի պակասիլ: Աուխուոյ և Շամախուոյ խաններն իրանց հպատակութիւնը աւելի ևս հաստատելոյ համար՝ խոստացան իւրեանց ձիանքովը, ջորիքովը և ուղտերովը կատարեն Շահի էն հրամանը:

Գերիքն ծանապարհ ձգելուց յետը չուցինք դէպ ի Գեանջայ, ուր երկու կամ երեք օրից աւելի չկացանք: Աշնան սկիզբն անձրեւային էր, երբ բանակը Գեանջիցն շարժեցաւ: Արբան Ֆաւադ խանի հողումն էինք, առաւ էր պաշարն, բայց մինչ մտնիք Վրաստանի հողը, այնուհետեւ ոչ թէ բնակիչները դուրս էին գնացած գիւղօրէից մէջիցը, նաեւ գիւղօրէից մէջի խոտը յարդը ևս այրած էին, ուստի շատ նեղութիւն էին կրում բոլոր զօրքն:

Ահիզքն ամենայն բանակն շատ ուրախ ուրախ էին գնում դէպ ի Վրաստուն, բայց մինչ մտանք նոցա հողն, ահն օր ըստ օրէ թուլացնում էր մեր սիրտը: Չանազան լրտեսների բերած համբաւներէ լսում էինք, իբր Էւրակլ խանը քառասուն ցլիսուն հազար Աովկասու լեռնականներէն ժողոված է զլեւին և ամենայն կրճերը բռնած, և թէ մտադիր է յետ կուսէն ընկնիլ մեր վերայ: Էռնականաց անունը սաստիկ ահ էր ձգել Պարսկական զօրաց մէջը, որք շատ անգամ վտանգուած էին նոցանէ: Զեր մոռացուած Ասդիր Շահի խորատկուած վերադառնալն Աովկասականաց զօրքերէն: Շահն երեք մասն բաժանեց իւր բանակն, միջինը ինքն վեր առաւ, առաջինը և վերջինը ուրիշ զօրապետներ յանձնեց:

Մոռացած եմ գետի և կամրջի անունները, ուր մեր յառաջապահ զօրքն հանդիպած էին մին քանի հարիւր Վրացի զօրականաց, որք պահապան էին կամրջին: Մինչ մեր բանակի սկիզբն հասնելը՝ Վրացիքը քաջութեամբ կռուած էին, բայց բանակի ձերն տեսած բովալէին յիսնաչափ մեռեալ և վերաւորեալ թողնելով՝ փա-

խած էին: Ամուրջն՝ որ մին նեղ ձորի մէջն էր ընկած, և էս էն կողմն բարձրացած բլուրներն՝ բաւականին ամբողջիւն էին տալիս նրան. մեր բանակն առանց ընդդիմութեան անցաւ էն կողմն և գետն գէպ ի վեր բարձրանալով փոքր ինչ, մին ծառաւէտ դաշտի վերայ գետի ափնումն բանակեցաւ: Եւս զիշեր որպէս Շահն՝ նոյնպէս և բոլոր բանակն կասկածանաց մէջն էին, կարծելով թէ շերակլ մեղ վերայ կարելի է յարձակուի. ըստ որում մեր բանակի տեղն էլ շատ անյարմար էր, թէ և չորս կողմներնիս մինչև լոյսը զգոյշ պահպաններ էին կարգուած:

Միւս օրը չուեց բանակն, իջաւ մի մեծ առուի վրայ՝ ուր չորս կողմի զիւղորեկց մահմետական տանուտերներէն կամ կալուածատերերէն քանի մի հոգի եկին ընձաններով իւրեանց հպատակութիւնը մատուցանելոյ Շահին: Սրանք ընկան բանակի առաջն որպէս ուղղեցոյց: Բանակը ծանր շարունակելով իւր չուն, չորրորդ օրը հասաւ Թիֆլիզը մին և կէս փարսանաչափ հեռաւորութեամբ մին դաշտ, և Սուր գետի ափնումն բանակեցաւ: Միւս օրը մտքումն լաւ չէ, ինչ օր էր, կարծեմ երկուշարթի կամ կիրակի լինէր, եղանակն մառախլապատ էր՝ երբ բանակն սկսեց չուել գէպ ի Թիֆլիզ: Մեր ձախակողմն ընկած էր բարձր և երկար լեռան մինչև Թիֆլիզ, և լեքն ձորերով և հովիտներով, որոց մէջին, ինչպէս լսում էինք, շատ Աղզու և Վրաց զօրք էին թաղած: Իսկ Սուր գետն ընկած էր մեր աջակողմեանը, և գետի միւս ափը, որ հարթ հաւասար դաշտ՝ թէև եղանակն ամպոտ էր, բայց էլ մեր աջքումը շատ

լաւ երևում էր, որ ձգվում էր մինչև Թիֆլիզ, ուստի և շատ զիւրութեամբ կարելի էր բանակը տանել՝ եթէ Սուր գետի վարար ժամանակը չէր եղած և կարողանայիք անց կենալ էն կողմն: Եւս էսպէս, անձուկ ձանապարհն՝ որով անց էինք կենալոց, մին կողմն լեռան բարձրութիւնը և շատ տեղ պատնէշներով և զօրքով ամրացած, միւս կողմն Սուր գետն աչքերնուս առաջն ներկայացած յորդութեամբն, մեղ ստիպում էին կարծել թէ անկարելի է արդարեւ Թիֆլիզը առնուլ, շա մոռացայ ասել, որ Շահն առաւօտը շատ շուտ քանի մի ձիաւորով գնացել նայել՝ քննել էր ձանապարհներն ու հրամայել յարձակուիլ գնալ գէպ ի քաղաքն:

Մեր բանակի տեղէն կէս կամ աւելի ևս ժամաչափ քալելուց յետը, հասանք անձուկ ձանապարհի կամ կրճի բերանը, որ Սուր գետի աջակողմն եր և մեր ձախակողմը: Եւտեղ բաձր լեռան ծայրի վրայ Վրաց զօրքն մին պատնէշի մէջ պնդացած կային: Ողջա գէմ բաւականին ուժ բերինք, բայց տեղերնիցը չշարժեցան, մինչև քանի մի թնդանօթ հրամայեց շահն յառաջ տարին, ու սկսեցինք նոցա վրայ կրակել, նոքա չկարողացան էլ մնալ տեղումը, դուրս եկան պատնէշն գնացին լեռան զլիններովը երկու ձիոյ ասպարէզ բացակայութեամբ, մտին երկրորդ պատնէշի մէջը, որոյ առաջն անցնելոյ տեղը այս ինքն ձանապարհը աւելի անձուկ էր և պինդ քարկապ: Սորա առաջն մին դաշտ կար փոքրիկ, ուր կարելի էր մեր բանակի տաններորդ մասն զետեղել, բայց պատնէշի հետը կռուելոյ համար՝ հազիւ թէ երկու հազար

բական զօրականք կարողանային շարժել իւրեանց զէնքերը: Արպէս ասեցի, մին կողմը Աուր զեան, և միւս կողմն անմատչելի սեպացած քարերից լեռաներ, որոց վերայ շատ զօրականք պատրաստ հրացաններնն ձեռքերնուն կային և մեծ արգելք էին լինում մեր զօրականացն պատնէշի վրայ յարձակուելոյ: Արեւի է մին ժամ աշխատեցինք, չկարողացանք մերձենալ նոցա պատնէշին, ընդ հակառակն մեզանէ կարծեմ հարիւրաւորք ընկան: Շատ անգամ, կարելի է ասել, միշտ յուսահատութիւնն է, որ ստիպում է մարդոյն նոր հնարք որոնել և նրանով իւր նպատակն յառաջ տանել:

Շահը տեսաւ իւր զօրաց վտանգը և անմատչելի պատնէշը, որոյ նմանը ասում էին առաջներնուս զեռ ևս շատերը կան, յառաջ կանչեց յառաջընթաց զօրաց ըստ պարապետին ու հրամայեց անշարժ էն կիրճն պահպանել ու զգոյշ կենայ լերան զլիւի վրայ ցրուած Աւրաց զօրքի յարձակուելոցն, և ինքն իւր ձիոյ զլուխն շուռ տուաւ դէպ ի Աուր զեան, ձայնեց, ով որ շահի զլուխն սիրում է և աղամարդ է, գայ շահի քամակիցը. թէ Աուր զեան ինչ տանէ, գոնէ դուք աշխատեցէք զիսկս բռնէք տանէք՝ Աւում թաղէք: Ասեց ու տակի թուրքմանի ձին մտրակեց Աուր զեանի մէջը: Աս անցանելոյ տեղը, մեր կողմի զետի ավեր՝ զետի հաւասար էր, բայց զետի միւս կողմը, քարափներով բարձրացած, ուր ելանելն ամենադժուար էր: Առանց սպասելոյ, մերձ երեք հազար հեծեալզօր հետեւեց Շահին, յորոյ մինը եւ էի քանի մի հարիւր հեծեալզօրօքս: Շահն երբ մերձեցաւ միւս ավին, կարծեմ նոր ի

նորոյ նշմարեց որ անկարելի է երիվարին դուրս գալ էն քարափների զլուխը, վասն որոյ ձիոյ զլուխը դէպ ի վայր շուռ տուաւ, ուր փոքր ինչ ի վայր մին տեղ կար, կարելի էր էն տեղաց դուրս գալը, հասաւ էն տեղ ու դուրս եկաւ ցամաքը: Արպէս առաջներ զետը մանողը Շահն էր, նոյնպէս և միւս կողմը դուրս եկողը առաջներն եւ լաւ: Ի հարկէ երկու, երեք հարիւրի չափ ձիաւորք զետումը խեղդուեցան, ըստ որում չկարողացան էնպէս միւս ավը դուրս գալ որ հաւասար էն ցածրացած տեղին հասնեն:

Երբ Շահն դուրս եկաւ ցամաքն, բարձրացաւ մին փոքրիկ բլրի վրայ, կանգնեց նայեց անցողներին ու հէնց անցողների վերջը կտրուեց, ձայն տուաւ ախոռապետին իւրեան համար երկու երիվար ևս անցկացնէ զետը: Քանի մի բովպէ ժամանակ տուեց հեծեալզօրին հանգստանալ և յետոյ ծանր ծանր յառաջ քշեց ձին գննելով, քննելով Աւրաց պատնէշները, որք պարզ մեղ երևում էին և Թիֆլիզու տնէրիցը ևս մին մասն աչքերնուս առաջին էր:

Աւրաց պատնէշափակ զօրականները տեսնելով Շահի զետը անցանին և հետզհետէ ստուարանալն անցնող հեծեալզօրաց, եւ յառաջ գնալն դէպ ի վեր զեան, և էն տեղ հուն լինելն, որ նոցա յայտնի էր և Շահին ոչ, և մանաւանդ Շահի ձեռնով առնելն սպարապետին, որպէս զի պատնէշի վրայ բուռն զօրութեամբ յարձակուի, կարծելով Աւրացիք թէ Շահն քամակիցն իւրեանց փակելոյ է, իսկ և իսկ թողն իւրեանց պատնէշը ու վերադարձան դէպ ի Թիֆլիզ և միացան երրորդ պատնէշում փակուած զօրաց հետը:

Շահն տեսնելով նոցա փախուստը, կամեցաւ վերադառնալ՝ որպէս զի կրկին գետի անցկացած տեղովը միանայ իւր զօրաց հետը։ Քանի մի հաւատաւորս Վրացիք, որք մեր բանակումն էին, յառաջ եկին, երկրպագութիւն տուին Շահին ու ասացին, էս մօտիկ տեղումն վերեն, այգեստանը որ երեւում, նորա մէջեցը աւելի ևս լաւ հուն կայ, ուր Աուրն երկու է բաժանվում, էն տեղաց առանց նեղութեան կարող է բեռնաբարձ զբաւան անգամ անց կենալ։ Շահն զովելով հետեւեց հաւատարմութիւնը և քաջարտութիւնը մտրակեց ձին՝ հասանք հաւատաւորս Վրացւոց ասած տեղը, ու շատ դիւրութեամբ անցկացանք հունովն։ Քանի մի բովալէ սպասեցինք, մինչև հասան զօրաց սկիզբը, ուր և մնացին հեծկազօրքն, իսկ հետեւեալքն յառաջ ընկան։ Տեսնում էինք առաջներուս ևս երկու պատնէշ, աւելի զօրեղ և ամուր քան թէ անցկացածներս ու տեսածներս։ Եւ այց երբորդ սլատնէն — որոյ վերայ ինքն Հերակլն էր հրամանատար, և մօտ էր մեզ, միայն մին փոքրիկ ձոր ևս այդիք էին բաժանում մեզ նորանից — շատ հզօր էր զօրքով և թնդանօթներով։ Այն ինչ էն փոքր ձորը զօրքի մասն անցկացաւ, միւս կողմը՝ որ փոքրիկ տափարակ տեղ էր, յանկարծ այդիների զլխիցն ու ձորիցն երկու բաժանուած հազարաւոր հեծկազօրք, և էնքան էլ հետեւեալք՝ որոց հրամանատուն որպէս իմացանք յետոյ, Հերակլի երէց որդին էր, դուրս եկաւ մեր զօրաց շղթայն կտրել, և բռնորն յարձակմամբ մեզ վերայ ընկաւ։ Մեր հեծկազօրն շատ յետ էր մնացել, և ընկեր էս մեզ մօտ, ոչինչ չէր կարող շինել տեղ-

ւոյ անձուկ լինելոյ համար։ Եւ նորա դուրս գայն մեզ մեծ վտանգի մէջ կձգէր՝ եթէ սպասել էր և ևս փոքր ինչ, որ մեր բանակի մեծ մասն անց էր կացել և չէր պէտք իւր զօրքը երկու բաժանել, որ իրանց ուժն չկորցնէր։ Եւ նեղ տեղն մեծ կոտորած եղաւ մեզանէ, առաջներուցս Հերակլն, մէջիցն որդին։ Շահն յառաջ գնացած զօրականաց մէջն էր, և ընդարձակ տեղ ունէր շարժելոյ, բայց քիչ էին իւր զօրքն, ընդ հակառակն մեր վերջից եկողների տեղն շատ նեղ էր, բայց զօրքը շատ և չէին կարողանում շարժել, վասն որոյ և էնպէս առանց ներդործութեան կար զօրականաց մեծ մասն։

Մեր յետամնաց զօրքի սպարապետն, որ Խօրասանցի էր, լսում է ընծայ բերող տանուաւրէներէն թէ այգեաց վերելիցն կարելի է թափուիլ ձորի մէջից դուրս եկած Վրացի զօրքի վրայ, վասն որոյ և շուտով քանի մի հարիւր ձիաւոր է վեր առնում, բարձրանում է այգեքանց զլխիցն զայ թշնամեաց վրայ, մինչ մեր անկանոն հետեւակներն ևս մոնում են այգեաց մէջովն հրացան դարտակում Վրաց հեծկազօրաց վրայ, որք տեսնելով փոքր փոքր շատանում են այդեաց մէջն զօրականներն, յետ են դառնում փախչել։ Հերակլն էս նոցա փախչելուցն անտեղեակ լինելով, պատնէշի մօտի բլրերի վրայ զօրականներեցը արշաւել տուաւ Շահի վրայ։ Շահն միայն էն էր հարկաւոր, այս ինքն Հերակլին բլրերի վերելիցն ներքե իջացնել մին հնարքով։ Պատերազմն եղաւ հասարակական և անձրեւն սկսեց շաղիլ։ Եւ միջոցին հրացանի գնտակով Շահի հեծած ձին վիրաւորուեցաւ, վասն որոյ նա էլ փոխեց

երիվարն ու հրամայեց հետեւել իւրեան
 ու արշաւել Հերակլի վերայ: Սա էլ չկա-
 րողանալով դէմ կենալ, շատ մարդ կորց-
 նելով մտաւ պատնէշն: Իսկ որդին երբ
 փախաւ ու բարձր ձորերի հովիտների մե-
 ջը մտաւ մեր ձախակողմիցն, հրաման դր-
 ակց շահն ինձ, իմ ձիաւորովն նորա հաղոր-
 դակցութիւնը հօր հետը կտրել: Ասա ևս
 փոքր ինչ նորա յետնէն գնալով, երբ տե-
 սի սարերի զլիւովն շուռ եկաւ դէպ ի աջա-
 կողմն, Թիֆլիզի վրայ, և երկիւղ կրելով
 թէ զիտութեամբ է փախչում, վերադար-
 ձայ, տեսայ քանի մի թնդանթ ձեպով
 բարձրացրել են իմ անցկացած տեղերի
 բլրների վերայ՝ ուստի մեծ վնաս էին տալիս
 Հերակլի պատնէշին: Ասա պատերազմին որ-
 պէս ականատես մինչև ցայսօր զորմացած
 եմ, թէ ինչպէս էր, որ մին հին սպարա-
 պետ որպէս Հերակլն, էնքան անձուկ կիր-
 ձերը և ամուր տեղրանքը առանց զօրաց
 էր թողած: Թէև շատերն ասում էին
 թէ, կային զօրք ամենայն տեղ դրած, բայց
 որդւոց և մեծամեծաց մէջը հակառակու-
 թիւն լինելոյ համար՝ թողին ու փախան:
 Ասպէս կամ էնպէս՝ ժամազափ ժամանակ
 կարողացաւ Հերակլն զիմանալ մեզ իւր
 պատնէշի առաջին, և յետոյ դուրս եկաւ,
 ոչ թէ փախստեամբ՝ այլ կռուելով մտաւ
 չորրորդ պատնէշի մէջը, ուր մին ժամ կա-
 ցաւ չկացաւ, փախչելը զերազանցից: Շատ
 նեղ էր և անձուկ ձանապարհն, որ գնում
 էր դէպ ի քաղաքը, և երկու կողմերն էլ
 այդիք էին: Շահն չհամարձակեցաւ իսկ
 և իսկ հետեւել փախչողներին, այլ կէս
 ժամազափ համբերեց, մինչև յետամնաց
 զօրքն ևս միացան շղթայի պէս, շարունա-
 կեց ուղին դէպ ի քաղաքն: Փոքր ինչ յա-

ռաջ գնացինք և ահա քաղաքն առաջեր-
 նուս, երեւցան եկեղեցիքը, սպարանքը,
 բնակչաց տները և բաղնիքները, որոնք մին
 մին կարելի էր թուել:

Մտիս է, հենց հասանք բաղանիքների
 մօտը, հարիւրաւոր մահմետականներ քանի
 մի մօլլայ առաջերնուն զուրաններ ձեռ-
 քերնումը՝ ոչխարներ մատաղ բերեցին ու
 շահի ձիոյ ոտի տակին զոհեցին: Աստեղ
 մին փոքրիկ նեղ կամուրջ կար, ուստի
 Շահն հենց անցկացաւ իւր մեծամեծնե-
 րովը՝ զօրավարները էլ չկարողացան զսպել
 զօրականացը, որք մտան մանր մուկն փո-
 դոցները և ցրուեցան քաղաքի մէջը:

Շահն, առաջնորդութեամբ քանի մի
 երեւելի տեղացի մահմետականների, գնաց
 իջաւ Հերակլի պալատումն, զրեթէ երկու
 հարիւր աւազանի և ծառայք չէին մտա-
 ցած մօտը, էնպէս էին ցրուած ամենք քա-
 ղաքի մէջը աւարի և կողոպուտի համար:
 Շատ մեծամեծներ մնացին էնտեղ ձիանց
 վերայ կանգնած, ըստ որում ծառայքն
 թողած էին իւրեանց տէրերնուն և մտած
 երկրացւոց տներն: Վիշերն շուտ վրայ
 հասնելով և բարակ անձրեւ զալով՝ շատ
 բնակչացը առթիւ եղաւ փախչելոյ, այսու
 ամենայնիւ մնացելոց ծիշն, աղաղակն,
 լացն երկինքն էր հասնում: Մինչև լոյսը
 զօրականները սպարապ չէին իւրեանց անի-
 րաւութիւնները գործ դնելուցն:

Միւս օրն կէսօրին մօտ՝ ատեան նստեց
 Շահն, ամենայն աւազանին գնացին
 իւրեանց երկրպագութիւն մատուցանեն
 ու շնորհաւորեն էնպիսի մեծ յաղթու-
 թիւնը, որոյ համար հրապարակաւ ասեց,
 ես մերձ յիսուն երեւելի յաղթութիւններ
 եմ արած, բայց ամենից մեծն էս էր: Զա-

վաղ խանը ատենումը ներկայացրեց Շահին քսան զոդարիկ աղջիկներ և երկոտասան տղայք տասն տասներկու ամեայք, որոց արտասուելն և հեծելն մարդոյ սիրտն էր մաշում ու մորմոքում:

Մինչ զուրս եկինք ատենիցը՝ սրալափ տանեաց վերայ տեսանք հօգն Եզան էր տալիս, քանի մի հոգի բարձրացանք տանիքն, ուստի զննեցինք Թիֆլիզի զիրքն: Աղորմելի տեսարան ներկայացաւ աչքերնուս առաջևը եկեղեցիքանց և հոյակապ տներից զուրս եկած բոցն, ծուխն, զօրականների և դերիքանց աղաղակն, էնքան սաստիկ էր, որ կասէիր տօնավաճառումն էինք:

Եւարը էն աստիճան էր յանդգնացրած զօրականներին, որ ոչ ոք չէր ուզում հրապատակել իւր մեծին: Տասն և մին օր կացանք էնտեղ, ամենայն օր նոր նոր միջոցներ էին մտածում աւերման, յափըշտակութեան և դերութեան համար: Տների, եկեղեցեաց յատակներն էին փորում, որպէս զի դարաններ գտնէին, ինչպէս և դրտան շատերը, որոց մէջն երեւելի և հարըստադոյն էր Հայոց եկեղեցւոյ դարանը, ուր քսանաչափ սանդուկներ լիքն ոսկեայ սկիհով, խաչով, խաչվառով, զիպակ և թանկագին եկեղեցական զգեստներով, զոհարներով զարդարած զաւազաններով և թաղերով բերին շահին ընծայ*):

(*) Էս Թիֆլիզը աւերող ներքինի Աղայ Մամադ խանից յետը Շահ եղաւ նրա եղբոր որդի Փաթալի շահն: Սրա որդին էր Մեկիք Աստուծոյ միջոցէն, որոյ կինն 1845 թուին եկաւ Թարսիզ իջաւ մին այգում վրանների տակին: Ես նրա և նրա ամուսնոյ հետը գործ ունենալով՝ գնացի տե-

Պաշարներնիս պակասութեան համար զուրս գնացինք Թիֆլիզու ոչ թէ մին յաղթական զօրականների, այլ որպէս կանայք, բանակ չէր, կանանոց էր, կասես թէ բանակի մէջն աւելի կանայք և երեխայք կային քան թէ զօրականները: Ոչ միայն Թիֆլիզը, այլ և նրա շրջակայքը անպատ դարձրին: Շահն մտադիր էր, որ-

սութիւն, Ինձ ընկալաւ այս բամբիշ տիկինն իւր վրանումը հրամայեց զայլայ բերին և շահն: Ղահվեց յետն երկու զալիան բերին, մինն նրա և միան ինձ համար: Մինչ քաշում էի զալիանն նրա հետը խօսելով կամ ուշադրութիւնս նրան դարձրած, երբէք չնայեցի զալիանի ինչ տեսակ լինելն: Երբ քաշեցի վերջացրել էի ուզում էի և ծուխն դատարկել, ձեռք տարայ զալիանի դըլուխն վերառնելոյ զգացի մին այլ կերպ մեծութիւն և ծանրութիւն, որ ոչ մին զալիանի զուլուն երբէք ոչ էն ծանրութիւնը և ոչ էն մեծութիւնը ունէր, սպասաւորն էնպէս շուտով առաւ զալիանը ձեռքիցս, որ էլ չկարողացայ նշմարել անգամ, երբ երկրորդ անգամը զալիան տըւին, ես ուշադրութիւնս ձգեցի նրա վերայ, լաւ նայեմ, ինչ.— էս զալիանի չորս կողմն Քրիստոսի չորս տնօրէնութեանց պատկերներն, այս ինքն Ծննդեան, Մկրտութեան, Խաչելութեան և Յարութեան, ամենանորը Դիւայ արած և օրպէս իւրաքանչիւր չորս կողմն էր անդամանդով, նոյնպէս և զալիանի վերայ և ներքի կողմներն բոլորակ շինած նոյնպէս քաղից զարդարած: Տիկինն շաղի այս ինքն ծածկոցի տակիցն նշմարելով իմ այս ուշադրութիւնս զալիանի գլխի վերայ, հարցրեց ծանաչդ զալիս է՞, Այո, պատասխանեցի բայց ասացէք խնդրեմ, ուսալից է էս ձեռք ձեռքն ընկած: Դրան, ասաց տիկինն, երբ ես սրտակուեցայ, Փաթալի շահն հրամայեց խաղիկիցն հանեցին Թիֆլիզու բերած աւարիցն ու ինձ Երեւ — Դիւայ տուաւ, ահա խաղիկը ուսալից էրնկած իմ ձեռքս:

պէս ասել եմ, վերադառնալ եկած ճանապարհովը Շուշոյ խանին պատժելոյ համար, բայց Վարաբաղու լերինքն ու սարերն խոչնդոտն էին նրան մանաւանդ ձմեռվան վերահասնին, որ էն կողմերը շատ շուտ կսկսի: Ետեան կազմեց, խորհուրդ տեսաւ, ամենը հաստատեցին Շահի չգնալը Վարաբաղու ճանապարհովը: Առլէյման խան Սարգարը և Հիւսէյն Ղուլի խան Ղումբուլին էլ հրաւիրած էին մեծ քննաներով: Շահն զնաց Թարվէզ քանի մի ժամանակ կենաց էնտեղ:

Բանակը չուեց դէպ ի Նրեան: Էս լուրն երբ լսած էին բնակիչներն, ցրուած զնացած էին լեռնակողմերն, և մեք անց էինք կենում դատարկ զիւղօրէից մօտովն և ինչ շունչ ունեցող կենդանի էինք տեսնում՝ խլում յափշտակում էինք, և ցուրտ լինելոյ պատճառաւ զիւղացւոց տըների առաստաղները, զերանները էին մեղ տաքացնողքը:

Չմեռնամուտ էր հասանք Թարվէզ, Նրեան, Ատիսիջեան և Մարանդ աւերակ թողնելով մեր քամակումն: Մեք էստեղ իմացանք, որ Շահն Թիֆլիզումն էր լուր ստացած Խօրասանցւոյ ապրստամբելն, վասն որոյ և չուզեց Վարաբաղու վրովն գնալ, որպէս զի չուշանայ, թէ և ասելով հիւր եմ գնում սարգարին, մեզանէ ծածկել էր: Փոքր ժամանակ մնալով Թարվէզ՝ չուեց զնաց Թեհրան: Ես և իմ ստորադրեալ հեծելազօրքն մնացինք Ետրպատական:

Պատմութեանս թին չկտրելոյ համար, չուզեցի ասել էս ճանապարհորդութեան մէջին քաշած բոսիս վիշտն: Բաց աչօք նայում էի տեսնում հաւատակիցներին

սպանումը և գերութիւնը: Արող ևս երեակայել, ինչպէս էր սիրաս էրվում, փթթվում ու նեղանում: Ինչ կարող էի անել: Իմ յոյսս մնացած էր միայն դիմել առ Եստուած: Ետրպատականը լքցուեցաւ զերիններով: Ինչպէս ոչխար վաճառում էին: Շատը, կերակուր չըրտնելով և կամ չկարողանալով ձի, ջօրի, ուղտ գտնել վրէն նստացնել բերել իւր զերիքն, ծանաղարհին սրախողող էր աւնում: Նրեանի բնակիչքն և Աթուղիկոսն, լուծւում էի, ազատում էին որքան և կարողանում էին փողով և պարզեւնելով՝ էն էլ հաղարիցն մինն հազիւ: Հագիւ էնքան բաղմութեան երրորդ մասն մընաց Ետրպատական, մնացելոցն քշեցին տարան խորին Պարսկաստանը, մինչև Խօրասանից էն կողմն էլ անցկացրին:

Տարի ու կէս մնացի ևս երբեմն Թարվէզ և երբեմն Մարաղայ առանց պաշտօնի: Օնաւ ինձ մին դուստր՝ որ քանի մի ամից յետը մեռաւ: Արդւոյս շատ էի սիրում, և մտադիր էի կնոջս փոքր փոքր յայտնեմ քրիստոնէութիւնս և համոզեմ նրան ծածկարար ինձ հաւատակից լինի: Մինչ այս մինչ այն՝ բերանէ բերան լուր եկաւ թէ Շահն զալիս է զնայ Վարաբաղու խանին պատժէ: Էս ասուլիսն հաստատվեցաւ և զրով: Հա եկաւ եկաւն մօտեցաւ, և մին էլ լսանք զօրաց ծէրը Ղազվին է հասած: Ղող ու սոսկումն ամենից սիրտը տիրել էր, ոչ ոք միամիտ չէր իւր կայքի, բնտանեաց ապահովութեան վրայ: Արպէս լուծւում էինք՝ էս անդամն ուրիշ եղանակաւ էր զալիս: Մէ թէ միայն իւր կատաղութիւնը ու զաժանութիւնը — յուսահատութիւնից իւր ստո-

բաղրելոց և տիրապետողաց անընդհատ ապստամբութեան համար, — որ բնական էր նրան, սաստկացրել էր, այլ և հրամայած էր զօրապետաց և զօրականացը աւարառութիւնը, յատկշտակութիւնը և մարդասպանութիւնը անխնայ դործ դրնեն: Արպէս թէ աստուածային բարկութեան հրամանադիրը, զբաժ տուած էին նորա ձեռքն, ոչնչացնել բանականաց սերունդն:

Արդարի հրամանաւը՝ պարտաւորեցայ հրաւեր զնալ Շահի առաջը մեծամեծ ընծայելք: Օւսանդանի ընծայքը և զընդունակացը նրան, որ քաղցր կերպով սկսեց հարցանել ինձ Ատրբէջանի կառավարչաց, զօրապետաց, զօրականաց և բնակչաց որպիսութիւնը: Աս պատասխանում էի զգուշութեամբ, հաւատ չընծայելով նորա քաղցր դիմացը և խօսակցութեանը, թէ կարելի է անուանել էնդունք քաղցր: Հրամայեց ինձ, Մամադ - իւսէյն խան Մարքէշիքշի - բաշւոյ վրահումը իջեանել: Ի հարկէ էս մին մեծ շքնորհ էր Շահի կողմանէ և մանաւանդ մեծ պատիւ, իւր ազդականի և երեսել պալատականի հիւր լինելը, բայց ես նրան հաստատ բնութեանը տեղեակ, աշխատում էի, որքան կարելին էր ինձ հեռի պահել նրա կերպարանքիցը՝ թէ և հեռի պահելն ևս վտանգաւոր էր:

Օւսանդանից երկու օթեան դուրս էինք կիւած, մինչ Շահն ատենանումը յայտնեց Թարվիզ ջմանելը: Աս, որպէս հրաւիրակ՝ երկրպագութիւն տուի ու աղերասնօք խնդրեցի չզրկէ Թափրիղեցւոյ իւր ամենաուստ շնորհքէն ու ոտից հողին երկրպագանելուցը ու հրաշալի կերպարանքի

տեսութենէն: Հրաշալի, — ի՞նչ հրաշալի, ընդ հակառակն զժողովրդեր, զգուշի:

Տես որդեակ, զկնի քանի մի բովակէ լուռութեանը՝ ասեց միայնակեացը, տես, քանի քանի գերդաստանաց ծանր պատժելոյ, զընդունակութիւնների և վշտերի պատճառ էի ընտել ևս էն հրաւիրանօքը: Պարտաւորութիւնս էր որ ինձ ստիպում էր խօսելը էնպէս: Դուրս կկինք ատենէն, ասպընջականիս և Միրզայ Բզայ Գուլի մոռնշի — մրմալէքին ևս միջնորդ ձգեցի, որպէս զի խնդրեն Շահն դայ Թարվիզ:

Աս տեղ միայնակեացը լռեց, և տեսայ, որ տաքացած երկար խօսալուցը վատակել էր, վասն որոյ և ևս շուտով վերադու ասեցի, երբէք էսպէս եռանդով և տեղն ու տեղն չէիք պատմած, հայր. որքան ինձ բաւականութիւն էր էսօր, էնքան Ձեզ նեղութիւն:

— Հա, որդի — պատասխանեց նա — էս օրվան անցքը որ ասեցի, կվերաբերէր քրիստոնէից, ուղում էի և ևս մանրամասն ասել, բայց շատը մոռացել եմ, և ասելի էլ, պէտք էր ոչ թէ ինձ, այլ և քեզ ևս վշտացնելի, էստունք էլ բաւական էին:

— Հայր, հարցրի, դուք մին բան մոռացաք ասել կամ թէ չուզեցիք յիշել, ի՞նչ էր ձեր զաւակի անունը:

— Մինչ իմ գալը՝ Բերահիմ Խալել էին զբաժ, բայց երբ ևս կկի՝ հօրս անունը զրի այսինքն Բլահվերտի:

— Ի՞նչ էր ձեր կնոջ անունը:

— Էզ ի՞նչ հարկաւոր է քեզ, վեր առաւ միայնակեացը աչքերը չռելով:

— Մի գիտէ, կարելի է ժամանակաւ պատահի ինձ ու զնամ Մարաղայ, էնտեղ կհարցնեմ, կիմանամ, կենդանի է՞, մե-

աւած է՝ ձեր կինը, և թէ կենդանի է, ի՞նչ կարծիք ունի նա ձեզ վերայ: Ահա՛ պատճառն:

— Հա՛, հա՛ . . . մտքումդ կայ էստեղ ևս զնա՞, տացէ տէր: Ի հարկէ, և որդւոյս ևս կտեսնես թէ կենդանի լինի . . . կնոջս անունն էր Պեօհար խանում: Եսեց և սկսաւ լալն: Փոքր ինչ սպասեցի ու վեր առայ, հայր, էս էլ մոռացաք, որ Թիֆլիզ զնացիք արդեօք ձեր պապական տներն տեսնելոյ:

Միայնակեացն զլսով ցոյց տուաւ թէ այո՛, այո՛, և էնպէս լուռ մունջ նստեց, մինչ ևս էլ անձարութենէս նախաճաշիկս բաց արի, սկսեցի շուտ շուտ ուտել, և մինչև տասն եւ հինգ ըովպէ կշտացայ ու ժողովցի, ու իրիկուան զրաճներս մօտը կարդացի, որը ուղղելոյ էր՝ ուղղեցի ու մընաս բարւով ասելով զուրս եկի: Աս տեղեցը վերկացաւ, եկաւ մինչև քարայրի դուռը ինձ ծանապարհ ձգեց:

Հասայ վանքը, փոքր ինչ հանգստացայ, վեր կացայ շարունակեցի սրբադրել և արտազրել էն օրվան զրաճներս:

Երեկոյեան պահ էր, խնդրեցի՝ Իբրահիմ Խալիլ աղէն եկաւ ինձ մօտ թէյ խմելոյ: Փոքր ինչ խօսալուց յետը, հարցրի՝ մայրդ կենդանի՞ է:

— Եյո՞ կենդանի է, պատասխանեց:

— Նրա անունը Պեօհար խանում է՞:

Եյո՞ Պեօհար խանում է: Եսեց ու նայեց երեսիս զարմացմամբ. — էդ ի՞նչ տեղաց քեզ յայտնի եղաւ, կրկնեց:

— Մի՞ զարմանար, պատասխանեցի, թէ երկու օր երեք օր ևս մնանք էստեղ, և ու դու ազգական դուրս կգանք:

— Ասրելի է, վեր առաւ նա, որովհետեւ մօրս մայրը Հայ էր, որ գերի էր բերված Վրաստանի կողմիցը:

Խօսակցութեան առարկայն փոխելով, Իբրահիմ Խալիլ աղէն զնաց, ներս եկաւ Վանահայրն, որում պատմեցի միայնակեցի թոռն լինելը ուղղակիցս, և թէ ի՞նչ պէս սրանց իմացումն տալով՝ միմեանց մօտը տանենք՝ տեսնվին ու խօսան: Վանահայրն աւելի ևս փորձուած, շատ համոզելով խնդրեց ինձ, թէ չեմ ասած Իբրահիմ Խալիլ աղին, երբէք չասեմ, որից մեծ վնաս կրկրի մենաստունը և նորա միաբանքն, երբ էս ձայնը տարածուի թէ մահմետականի ասպնջական եմք, և թէ, եթէ հաւատ չես ընծայում ինձ, Պօղոս վարդապետն աւելի ծեր, աւելի աշխարհք տեսած, նրան ևս կանչենք հարցնենք: Մարդ ուղարկեցինք՝ բերել առինք Պօղոս վարդապետին, որ երբ լսաւ, իմացաւ, աւելի ևս վանահօր կարծիքը հաստատեց: Ի հարկէ ևս ևս պարտաւոր էի համաձայնել նրանց և լուրթեան տալ էս վտանգաւոր անցքը:

Միւս օրը, ամենայն օրվան նման առաւօտեան շուտով զնացի դէպ ի քարանցաւն, դաի միայնակեցին դուրսը նստած, իւր սովորական սաղմոսը ձեռքումը: Երբ ինձ տեսաւ՝ ոտի վրայ կանգնեց, վռազեցի մօտեցայ, որ թոյլ չտամ նեղութիւն կրէ ինձ համար կանգնել: Չեղաւ, վեր կացաւ, փոքր ինչ ոտի վրայ երկուքս կանգնած կացած զրոյց տուինք, նա իմ առողջութիւնը, ևս նրանք հարցնելով նստեցանք: Ես իմ զրաճները սկսեցի էս օր յառաջ ձգել և կարդալ նորա մօտը: Երբ վերջացրի, ասեց միայնակեացն ուրախ դիմօք և կիսա-

ծիծաղ, հիմի իմ խօսելոյ շարքն եկաւ։
Հարամերես ասացի, խնդրեմ։

Հա՛ն, շարունակեց միայնակեացն, հա՛ն
երբ ես միջնորդներ ձգեցի Շահի մօտը
Թարվէզ գալոյ համար, մի և նոյն օրն էլ
սուրհանդակ դրկեցի Թարվէզ Սարգարին
խմացում տալ Շահի նպատակն։ Սար-
գարն տասն հազար թուման ընծայ էր
ղեկել և մին աղերսագիր էր գրել Շահին,
որպէս զի գայ Թարվէզու վրոյն գնայ
Վարաբաղ։ Երբ էստունք ներկայացրի
Շահի, ծիծաղելով խոստացաւ կատարել
Սարգարի խնդիրքն, վասն որոյ և բանակի
չուն ուղղեց զէպ ի Թարվէզ։

Խօրասան, Ֆարս—Երազ, Բուլուջիս-
տան և Մազանդարան, և բոլոր արեւելեան
Պարսկաստունը հնազանդած էր նորա զը-
բօշակին, մնում էին Ատրպատականի քա-
նի մի փոքր խանութիւնները, որ ապա-
հովսցնէ իւր թագաւորութիւնը։ Արքան
յառաջ էինք գնում, էնքան ստուարա-
նում էր բանակն։ Մտիս չէ, երեկի ասե-
ցի թէ ոչ՝ որ իւր երկու եղբօր որդիքը ևս
հեան էին, որոց արդէն թագաւորազանց
սխաղոտով էին անուանում, — մինը Երբաս
միրզայ և միւսն Մամադ Վուլի միրզայ,
որոց հօր իսկական անունն էր Ֆաթալի,
բայց Խամբախայ խան կասէին, որ զեռ ևս
Շահի տխաղոս չունէր։

Աւր որ անց էր կենում, չորեք կողմի մե-
ծամեծներն, երեւելիքն մեծամեծ ընծանե-
րով էին գալիս ներկայանում։ Օւսանդիա-
նու հազիւ քսան օրումը հասանք Թար-
վէզ, ուր տասն և վեց օր կացանք ու չունե-
ցինք գնացինք բանակով Վարազաղու
վրոյն զէպ ի Վարաբաղ։ Ինձ կրկին
յանձնեց Ատերբեյժանի հեծելազօրաց հը-

րամանատարութիւնը։ Տասն և չորս օ-
րումը քայլելով էն բարձր Վարազաղու
լեռներու և անվերջանալի անտառների
միջովը հասանք Երազի ամեն, որոյ կա-
մուրջն Իբրահիմ խանը աւերել էր տը-
ւած, վասն որոյ չորս օր էնտեղ բանակին
հանդատութիւն տուեց մինչև փայտից կա-
մուրջն նորոգեցին։ Շահի էնպէս ծանր
գնալուցն, մեք կարծում էինք որ ուղում
էր Իբրահիմ Խանի սիրտը երկիւղ ձգէր,
որպէս զի նա փոշիմանի կամ միջնորդ ձգէ
կամ զեսպան ուղարկէ կամ ինքն գայ և
ներումն խնդրէ։ Երաւունք ունէր Շահն
էնպէս մտածելն, ըստ որում նրան լաւ
յայտնի էր Շուշի բերթի ամրութիւնը
և անառիկ լինելն։ Երազեցն մին օրվան
ճանապարհ հեռացած էինք, յանկարծ լը-
սեցինք թէ Իբրահիմ Խանը թողել է
Շուշուայ բերթը՝ փախել գնացել է Վա-
ղըստան լեռնականաց մէջը, թէ և միւս օ-
րը հաստատեցին թէ գնալն Վաղստան
սոււ է, այլ դուրս է եկած ամրացած Վեօդ-
չայ (Սեանայ) լեռանց մէջը, և թէ մեծ
զօրք ունի ժողոված զլեին։

Էսպէս էնպէս, Շահն ականջ չդրաւ,
հրամայեց բանակին չուել գնալ զէպ ի
բերթն։ Երբորդ թէ չորրորդ օրը, քանի
մի ժամաչափ ճանապարհ մնացած մինչեւ
Շուշի, ընդ յառաջ եկին մեզ բերթիցն
հրաւիրակներ։ Շահն գնաց մտաւ բերթն
չորրորդ մասնի մին մասն զօրքովն, մնա-
ցեալքն էստեղ էնտեղ բերթի մօտիկ չըջա-
կացրումն բանակուեցան։ Վանի մի օր անց
կացաւ՝ պաշարն սուղացաւ, ըստ որում շըբ-
ջակայ զիւղօրէքանցիցը ուտելէք, պաշար
բերելոյ ժամանակն անզուսպ զօրական-
ներն խլում էին յափշտակում ողորմելի

զիւզականաց ձեռքիցը: Պրտի զօրաց համար զիւրին էր յափշտակելն, որովհետեւ ցրվում էին 7, 8 փարսախաչափ հեռի զիւզօրէից մէջն, կամ բերթն բերելն՝ ինչ գտնում էին խլում էին, բայց բերթումն գտնուած զօրականաց համար մեծ դժուարութիւն էր, ոչ գանձարանից զրամ էր զուրս գալիս, և ոչ վաճառող կար որ զօրականները գնային գնէին. — քնէր էլ վաճառող՝ զօրականը զրամ՝ չունէր՝ տար քնէր: Ար կողմը նայում էիր՝ պարտաւոր էր զօրականը յափշտակութեամբ յագենալ: Անճարութիւնից՝ զօրականներն սկսեցին բռնութեամբ մօտել քաղաքացւոց տները, ուր ինչ գտնում էին խլում էին, երբեմն չրտուողին կամ հակառակողին սպանում էլ էին: Ամենայն օր բնակչաց դանդաժանքն աւելանում էր: Թէեւ ողորմելիքն դանդաժում էին, բայց ո՞վ էր նոցա լսոցն: Աթէ բնակչաց բողոքանացն լսելով՝ զօրականներին պատժում էին, զօրականներն էլ միմեանց աջակցութեամբ — իրաւունք ունէին քաղցածութեան համար միմեանց օգնել — անհնազանդութեան նշաններ էին ցոյց տալիս: Չօրականքն երկու անգամ ժողովուեցան Շահի զրանը Աալլահ, Աալլահ զոռացին, թէ քաղցած ենք հաց տուր մեզ կամ հրաման տուր քնանք մեր տներն: Եւ պատճառ էր տուած Շահին կասկածել, որպէս թէ իւր աւաղանիքն են էս զօրաց անբաւականութեանը պատճառն կամ սովորցնողքն: Արա էլ պատճառն էն էր, որ պալատականները և զօրավարները միմեանց հետ թշնամի էին, այսինքն Ֆարսերն և Թուրքերն երկու կողմնակցութիւն էին բաղկա-

ցրած: Շահն էս բաների վրայ ժանտացած էր, երկու կողմանցն էլ ունին էր դրնում, երբեմն մինին երբեմն միւսին առանց ձիշտ վերահասութեան պատժել էր տալիս և պաշտօններին առնում ձեռքերնուցը ու անարժան կամ վատազգի մարդկանց տալիս: Չարմանք էլ չէր, որ խորագէտ Շահն էս հնարքն էր դործ դնում, որպէս զի երբեք չհամաձայնվին իւրեան կորստեանը համար:

Ընդ հակառակն օր ըստ օրէ մատնողութիւնները և քրտութիւնները սպառնանում էին պալատականաց, զօրավարաց, և զօրաց մէջը և ամենայն հաւատարմութիւնը վեր էր կացել, ոչ ոք չէր համարձակվում լաւ կամ վատ խօսել մինի հետը, լռելն անգամ վտանգ էր բերում մարդոյս: Շըշունչ կար թէ Շահն հրամայել է պահպանները աւելացնեն և զիշերուան ըզգուշութիւնն ամրացնեն: Ամենայն երեսելիքն իւրեանց կեանքն կասկածանաց ու վրտանգի մէջ էին տեսնում, որովհետեւ օր չէր լինում՝ որ մինը կամ երկուսը նոցանէ, սուտ կամ ձշմարիտ, յայտնի կամ ծածուկ մին յանցանաց պատճառաւ չկորցնէր իւր կեանքն: Եւ էր պատճառն, որ միմեանց մօտ քնալ գալն կտրած էին, և Շահի զրանն էլ կամ առնելից զուրս գալիս ևս միմեանց հետը խօսելը երկիւղ էին կրում:

Օր ըստ օրէ սպանվելոց թիւն աւելանում էր: Այլ միայն հարուստ բնակչացը, այլ և իւր աւաղանեացը սուտ մուտ պատճառ բերելով առժուժում էր, բռնութեամբ նոցանէ զրամ էր փոխ առնում: Որպէս բնական հակուած գէպ ի անիրաւութիւն, օր քան զօր կասկածանքից, իւր ամեն ա-

լարմուկներէ հիմն բռնութիւն էր արած, շատ չքաշեց էս անիրաւութեանց բաժակըն լրացաւ և պէտք էր պատժուիլ նա, որ ոչ մարդասիրութիւն և ոչ կարեկցութիւն ունէր: Մին օր հրամայեց իւր եղբոր որդւոցն, որք իւրեան ժառանգներն էին, դուրս գնան բերթիցն, ուր կհաւանին՝ էն տեղ վրան խփեն, որպէս զի երբեմն երբեմն դնայ և ինքն նոցա հիւր լինի նախաձաշիկ և կամ ընթրիք անելոյ:

Իմ հեծելազօրք բերթիցը դուրսն էր բանակված ներսումը կեր և կերակուր չլինելոյ համար, և միայն հարիւրական ձիաւոր ունէի մօտս պատրաստ, որ երբ Շահն ձիաւորվի, ես ևս իմ ձիաւորներովը հետը ձիաւորվիմ: Ինձ էլ միշտ երեկոյեան պահին առաւօտեան համար, առաւօտեանը կէսօրիցը յետոյ ձիաւորվելոյ համար լուրն կտային զոնիցը: Մին ուրբաթ օր, ընդդէմ սովորականի, առաւօտեան լուր տուին, թէ Շահն իսկ և իսկ գնում է եղբոր որդւոց մօտը նախաձաշիկ անելոյ: Շատ վաղելով հազիւ կարողացանք հասնիլ Շահին բերթի դրանը: Երեկոյեան պահին մինչ վերադառնում էր բերթըն, զեռ ևս բերթի դռնէն Շահը ներս մտած չմտած՝ յանկարծ կանանց և երեխայից ճիւղ և ազդակը բերթիցը բարձրացաւ: Երբ և ինքն Շահն հէնց դրան մէջ մտաւ, հարիւրաւոր կանայք և երեխայք ընկան նոյն ճշովն նորա ձիոյ օտի լացովն տակը, թագաւորն ողջ լինի՝ ողորմութիւն արա մեզ բղաւկելով: Նոցա ազդակիցը և յանկարծ երկրամած լինելուցն, Շահի ձին խրանեց: Ես անսովոր պատահմունքիցն Շահի երեսի — թէև բնական զոյն չկար — սփրանեց: Եռանց իմանալոյ ողոր-

մելեաց լալոյ պատճառն, շատ զայրացաւ առաջնթաց սպասաւորաց և աւագանեաց վրայ, թէ ինչի՞ թոյլ տուիք էսպիսի տեղ դոցա կանգնելն: Շատ վատ խօսքերով հայհոյելուց յետը, վեր առաւ, զիտեմ, զիտեմ, էսպիսի միջոցներով և հնարքներով ուղում էք ինձ երկիւղեմէջ պահել, երդնում եմ սուրբ Աւուրանը և մարդարէի զուլնն, որ մին քանի մարդկանց զըլուխները՝ վաղն մինչև արեգակի բարձրանալն զիզվելոց են վրանիս առաջին: Յայտնի էր ամենիս, որ նրա բերանէ դուրս եկած պատիժն անդառնալի էր:

Եղբրսարկուքն տեսնելով Շահի զայրանալն, և հետեակ սպասաւորքն ևս նըրանց փետերով ծեծելով, փախան ու հեռի կանգնեցան: Են միջոցին, որ Շահի ձին խրանեց, յետնէն զալիս էի ես, իսկ և իսկ վար թռայ՝ նրա ձիու երասանակն բռնելոյ, վասն որոյ և Շահն ինձ հրամայեց իմանալ կանանց և երեխայից խընդիւքը ինչ են: Աննայք չկարողանալով մի ըստ միջէ իւրեանց խնդիրքն ասեն, հասկացնեն, քանի մի սպիտակամորուս տղամարդիկ, որ էն տեղ փոքր ինչ հեռի նըրանցից կացած էին, պատմեցին ինձ պատճառն: Ես վաղ քշեցի, հասայ Շահին, երբ ձիուցը իւր մեծ վրանի առաջն վայր էր իջնում, ասեցի ինչ որ լսած էի, այս ինքն ժողովրդոց գանդատըն է զօրականաց անիրաւութեան վերայ, որք մանում են աներն, կողոպտում են, ինչ տանից ծուխ է դուրս գալիս՝ պատելիցն են թափվում, բաւական չէ ինչ տեսնում են՝ բռնութեամբ տանում, երբեմն ողորմելի կանանցը չարչարում են՝ որ-

պէս զի թէ ծածուկ տեղ փող, պղնձեղէն
և շորեղէն ունին՝ ցոյց տան։

Շահն էստունք մինչ լսաւ, աւելի ևս
դառնացաւ՝ հրամայեց զնա տնտնոցաւ, վաղն
են վերահասու կլինիմ, և կպատժեմ ամեն
յանցաւոր զօրականաց և նրանց հրամա-
նատարներին։ Շուռ եկաւ իւր սպասաւո-
րացը երկուսին, անդամք յիշելով, հայ-
հոյն, թէ երեք օր յառաջ գլխներնիդ
էիք զրաւ կնում, և թէ ճշմարիտ լինի ժո-

ղովորդի անբաւականութիւնը, էս ի՞նչ է
ուրեմն, ազգականներնիդ կողմն էիք պա-
հում։ Աւաղն ևս ցոյց կտամ ձեզ։ Ասեց
ուներս զնաց վրանը։ Ինքն ներս գնաց,
բայց ողջ մեծամեծաց գլխին ջուր մա-
ղուեցաւ։

(Շ-բ-է-է-է)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՅՅՈՒԱԾՔ ՊԱՐՍԿԱՀԱՅԻ.

Եզատ Աստուած, զու որ սիրես միշտ հանապաղ ազատութիւն,

Երիր մարդս անձնիշեան և տըւիր նմա զու զօրութիւն,

Խորհիլ ուղեղ, կշռել, զատել, ամեն զործի հսկողութիւն,

Միտք, զաղափար, խելք ու հանճար, վսեմ զրիչ և զիտութիւն,

Պան մարդիկներ միշտ չափազանց կցանկան որ յառաջ գնան,

Մեծ ջանքերով կջանան որ ուսման փառքէն մաս ստանան,

Շատեր թերի, շատ կատարեալ կան և շատեր որ զուրկ մնան,

Հազարից մէկն կզարգանայ երեւիլ ուսումնական,

Երբ նա հասնի այսպէս փառքի որ ստանայ համբաւ բարի,

Գիշեր ցերեկ նա կաշխատի, ազատ գրչի կհնտեի,

Որ իւր ազգի աշէն բանայ՝ տրդիտութեան զուրկից հանի.

Եյսպէս մարդիկ արժանի են որ ստանան պատկ ոսկի,

Եյսպէս մի փառք ով չտիրեր որ յաւիտեան միշտ իւրն յիշեն.

Պան մարդիկներ որ միշտ ջանան իւրեանց անձերն նորան զօհն,

Երբ որ հասնին նպատակին՝ միամիտ են իւրեանց ազգէն

Որ զրաճներն միշտ կընդունին, յայնժամ զրեն ազատօրէն:

Հայոց ուսեալքն ի՞նչ անեն օտար ազգաց միջում՝ ազրեն,

Թէ ուղենան ազատ գրել նախանձելով՝ զուր զրպարուն,